ԱՐԱՔՍ ՓԱՇԱՅԱՆ
(ՀՀ ԳԱԱ ԱԻ)

ՇԻԱ ՓՈՔՐԱՄԱՄՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱՅՈՒՄ. ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածություն

Շիաների մեծամասնությունը Սաուդյան Արաբիայում բնակվում են հիմնականում երկրի Արևելյան նահանգում՝ ալ-Հասա և Քաթիֆի օազիսային՝ նավթով հարուստ շրջաններում, չնայած շիաներ կան նաև Մեքքայում, Մադինայում, Ռիյադում: Դժվար է հասկանալ, թե որքան է շիաների ճշգրիտ թիվը Սաուդյան Արաբիայում՝ հաշվի առնելով այն փաստը, որ էթնիկ և դավանական պատկանելության ճշգրտման մարդահամարներ չեն անցկացվում: Ըստ առանձին տվյալների՝ շիաները Սաուդյան Արաբիայի բնակչության տաս-տասնիհինգ տոկոսն են՝ մոտ երկու միլիոն մարդ[1]: Շիաները Սաուդյան Արաբիայում բախվում են տարաբնույթ խտրականությունների, այդ թվում՝ կրոնական, տնտեսական, սոցիալական և այլն[2]: Խնդիրն այն է, որ Սաուդյան Արաբիայի պետական գաղափարախոսության հիմքում ընկած վահաբականությունը՝ սուննի իսլամի ամենապահպանողական հոսանքը, որոշակի անհանդուրժողական վերաբերմունք ունի շիայականության նկատմամբ՝ որպես իսլամի ոչ ուղղափառ ուղղություն: Մյուս կողից, 1979 թ. Իրանի իսլամական հեղափոխությունից և սաուդաիրանական հարաբերությունների վատթարացումից հետո շիաները, շատ դեպքերում, դիտարկվում են որպես հինգերորդ

[1] Nasr V., The Shia Revival, New York, 2006, p. 236՝

[2] The Siite Question in Saudi Arabia, Report 45, Middle East and North Africa, International Crisis Group, 19 September, 2005, https://www.crisisgroup.org/middle-east-north-africa/gulf-and-arabian-peninsula/saudi-arabia/shiite-question-saudi-arabia, հասանելի է 2019 թ. նոյեմբեր ամսին:

շարասյուն: Շիաների նկատմամբ հալածանքների ու բանտարկությունների պատճառներից մեկը կապված է Իրանի օգտին լրտեսություն անելու մեղադրանքի հետ[3]: Թագաժառանգ Մուհամմադ բին Սալմանի՝ Vision-2020 ծրագրի շրջանակներում[4] Սաուդյան Արաբիան արդիականացնելու և բարեփոխելու մտադրությունը շոշափելի արդյունքներ չի արձանագրել շիաների հիմնախնդիրների կարգավորման ուղղությամբ:

Շիաների նկատմամբ սաուդա-վահաբական անհանդուրժողականության պատմական ենթատեքստը. Ալ-Հասայից մինչև Իրանի իսլամական հեղափոխություն

Շիաների նկատմամբ սաուդական իշխող ընտանիքի անհանդուրժողականությունը երկար պատմություն ունի և առավել ցայտուն դրսևորվեց այն ժամանակ, երբ սաուդական ընտանիքը դաշն կնքեց կրոնական քարոզիչ, վահաբականության հիմնադիր Մուհամմադ իբն Աբդ ալ-Վահհաբի հետ: 1744 թ. սաուդցիների և վահաբիների դաշինքը հիմք դարձավ Դիրիայի էմիրության՝ առաջին սաուդական պետության ստեղծման համար[5]: Սաուդական ընտանիքը Արաբիան իրեն ենթարկելու հստակ ծրագրեր ուներ: Նրանք ձգտում էին միավորել նաև Արաբիայի՝ շիաներով բնակեցված արևելյան նահանգները՝ հիմնավորելով այն որպես անհավատների դեմ պայքար: Արդյունքում, Հասայի շիաներն ապստամբեցին: Սաուդական զորքերն ավերում էին շիայական ու սուֆիական սրբատեղիները: 1802 թ. Մուհամմադի որդու՝ Սաուդի զորքերը մտան Իրաքի տարածք՝ Քերբալա, ավերեցին տեղի շիայական սրբատեղիները, վնասեցին Հուսեյնի

---

[3] Loumi M., Sectarian Identities or geopolitics? The regional Shi-Sunni Divide in the Middle East, The Finnish Institute of International Affairs, p. 32-47.

[4] Vision 2030, https://vision2030.gov.sa

[5] В 1792 году после смерти Мухаммада ибн Абд-аль-Ваххаба Саудиты объединили в своих руках верховную светскую и духовную власть. В 1803 году Саудиты захватили Мекку, а в 1804 — Медину. Однако саудитская власть в Аравии продолжалась до 1811. Против них выступил хедив Египта Мухаммед Али. В 1818 году египтяне взяли их столицу Эд-Диръия и сровняли с землёй. Амир Абдаллах I ибн Сауд был отправлен в Стамбул, где его обезглавили.

մզկիթը, զգալիորեն տուժեց տեղի բնակչությունը։ Այս իրադարձությունները ցավոտ հետք թողեցին շիաների հավաքական ինքնագիտակցության մեջ։ Հասային հաջողվեց դիմադրել մինչև 1913 թ.։ Հենց նույն թվականին շիա ազգաբնակչության դեմ իրականացվեց բռնությունների նոր ալիք[6]։

Ավելի ուշ՝ 1932թ., ստեղծվեց Սաուդյան Արաբիայի Թագավորությունը։ Վահաբականությունը դարձավ սաուդական պետության հիմնական գաղափարախոսությունը։ Վահաբական կրոնական ընտրանին իրավունք ձեռք բերեց վերահսկել կրթության, հասարակության բարոյական նորմերի պահպանման, մարդու իրավունքների, նույնիսկ՝ սպորտի և այլ ոլորտներ։ Շիաները դիտարկվեցին վահաբականության լուսանցքից դուրս։ Հակաշիայականությունը դարձավ վահաբական ուլամայի հռետորաբանության բաղկացուցչներից մեկը։ Այս հանգամանքը նպաստեց պետության մեջ շիաների երկփեղկվածության, ինչպես նաև սաուդական հասարակության մեջ հակաշիայական տրամադրությունների, որոշ դեպքերում նույնիսկ շիաների նկատմամբ ատելության ձևավորմանը[7]։

Նման մոտեցումն առաջ բերեց շիայական ընդվզման վտանգ, որը դրսևորվեց 1979 թ. Իրանի իսլամական հեղափոխությունից հետո[8]։ Ըմբոստությունների ալիք սկսվեց շիայական Քաթիֆում, որը զանգվածաբար ճնշվեց։ Իրանի շիայական հեղափոխության արտահանման սպառնալիքի համատեքստում լուրջ առճակատում առաջ եկավ սաուդաիրանական հարաբերություններում, որոնք այդպես էլ չհաղթահարվեցին։ Իրանական հեղափոխության ազդեցության

---

[6]Մանրամասն տե՛ս, Васильев А. М., Истории Саудовской Аравии (1745- конец XX в.), Москва, 1999.

[7] Доваев И. Р., Радикальный ваххабизм как идеология религиознополитического экстремизма, Проблеми политологии, №2, 2003, https://cyberleninka.ru/article/v/radikalnyy-vahhabizm-kak-ideologiya-religioznopoliticheskogo-ekstremizma, հասանելի է 2019 թ. նոյեմբերին։

[8] Иранская революции 1978-1979. Причини и уроки, Москва, 1989, https://book.ivran.ru/f/iranskaya-revollyuciyacompressed.pdf, հասանելի է 2019 թ. նոյեմբերին։

արդյունքում սաուդական ներքին անվտանգության համակարգը որոշակիորեն խարխլվեց, որի ապացույցը 1979 թ. Մեքքայի մեծ մզկիթի գրավումն էր Ջուհայնամ իբն Ուտայբիի և «ալ-Մասջիդ ալ-հարամ» խմբի անդամների կողմից: Գրավման պահին մզկիթում և հարակից տարածքում գտնվում էր մոտ վեց հազար մարդ: Ապստամբները հանդես եկան Արևմուտքի հետ սաուդական «հանցավոր» կապի, ԱՄՆ-ին նավթ վաճառելու, սաուդական թագավորական ընտանիքի ճոխ ապրելակերպի դեմ: Մզկիթը գրավելով՝ նրանք ցանկանում էին նաև ի ցույց դնել Մահդիի «աստվածային» առաքելությունը, միևնույն ժամանակ հնարավորություն ստեղծելով, որպեսզի նա հավատարմության երդում տա սրբազան Քաաբայում[9]:

Իրանի իսլամական հեղափոխությունից հետո Իրանի արտաքին քաղաքական ուղենիշը արմատապես փոխվեց: Իրանի հարաբերություններն ԱՄՆ-ի, Իսրայելի, Ծոցի արաբական միապետությունների հետ զգալիորեն լարվեցին: Իրանը բացահայտ կերպով ի ցույց դրեց իր մտադրությունը՝ ընդլայնելու ազդեցությունը Մերձավոր Արևելքում՝ օգտագործելով շիայական գործոնը[10]: Իրանը, կարելի է ասել, սկսեց միջամտել շիայական համայնքներ ունեցող արաբական երկրների ներքին խնդիրներին Լիբանանում, Իրաքում, Ծոցի արաբական միապետություններում և այլն[11]: Թեհրանը հայտարարեց, որ աջակցում է պաղեստինյան պետության ստեղծմանը, պաղեստինյան հիմնախնդրին և Իսրայելի դեմ պաղեստինցի ժողովրդի ազատագրական պայքարին: 1982 թ. Իրանի անմիջական աջակցությամբ Լիբանանում ստեղծվեց շիայական ռազմաքաղաքական «Հիզբալլահ» կազմակերպությունը, որը մեծ դեր խաղաց տարածաշրջանում Իսրա-

---

[9]Yaroslav T., The Siege of Mecca: The Forgotten Uprising in Islam's Holiest Shrine and the Birth of Al Qaeda, Doubleday, 2007, p. 87.

[10] Исламская революция в Иране. Прошлое, настояшее и будушее, Москва, 1999, https://book.ivran.ru/f/revolyuciya--proshloe.pdf հասանելի է 2019 թ. Նոյեմբերին:

[11] Ушаков В. А., Иран и мусульманский мир 1978-1989, Москва, 1999, http://book.iimes.su/wp-content/uploads/1999/r99irn_pe.pdf, հասանելի է 2019 թ. նոյեմբերին:

յելի և նրա դաշնակիցների դեմ հակազդեցություն կազմակերպելու հարցում[12]: Հետագա տարիներին Իրանի աջակցությամբ ստեղծվեց շիայական ռազմաքաղաքական բազմաթիվ խմբավորումներ, որոնք դարձան Իրանի ռազմաքաղաքական հենարանը: Իրանական գործոնի ակտիվացումը Մերձավոր Արևելքում ավելի խորացրեց Սաուդյան Արաբիայում շիաների նկատմամբ անհանդուրժողականության մթնոլորտը: Նրանք վերջնականորեն սկսեցին գիտակցվել որպես «հինգերորդ շարասյուն»:

Շիաների նկատմամբ խտրականությունների դրևսրումները

Սաուդական իշխանությունները շիաների հետ կապված խնդիրները ներկայացնում են որպես ազգային անվտանգության հարց, ժամանակ առ ժամանակ «բացահայտվում» են շիաների կողմից հօգուտ Իրանի արված լրտեսության դեպքերը, ահաբեկչություններում կամ հնարավոր ահաբեկչություններում նրանց մասնակցության փորձերը: Շատ դեպքերում մեղադրյալները ենթարկվում են մահապատժի կամ երկարատև բանտարկությունների: Բազմաթիվ հետազոտություններ ու մշտադիտարկումներ գալիս են ապացուցելու, որ շիաների հետ կապված պետության օրակարգը շատ դեպքերում կեղծ է կամ չափազանցված:

Կասկածից վեր է, որ Իրանը աջակցում է ոչ միայն Սաուդյան Արաբիայում, այլև ամբողջ արաբական աշխարհում շիաների հիմնախնդիրներին՝ հիմնականում դրանք ծառայեցնելով իր ազգային շահերին ու հետաքրքրություններին: Սակայն այս հանգամանքը չի արդարացնում գոյությունը այն իրողությունների, որոնց բախվել ու բախվում է Սաուդյան Արաբիայի շիա ազգաբնակչությունը:

Չնայած Սաուդյան Արաբիայի շիայաբնակ շրջաններում դաշտային և այլևայլ հետազոտություններ իրականացնել գրեթե անհնար է, սակայն կան առանձին միջազգային իրավապաշտպան կազմա-

---

[12] Hezbollah's evolution. From Lebanses Milita to regional power, https://www.mei.edu/sites/default/files/publications/PP4_Blanford_Hezbollah.pdf, հասանելի է 2019 թ. նոյեմբերին:

կերպությունների, ինչպես նաև ԱՄՆ-ի պետդեպարտամենտի զեկույցները, որոնք որոշակի լույս են սփռում շիաների հիմնախնդիրների, պետության և վահաբական հոգևորականության կողմից շիաների նկատմամբ տարվող քաղաքականության մասին[13]:

Ինչպես արդեն նշեցինք, պետական մեքենան շատ դեպքերում չափազանցնում է իրողությունները՝ շիաների դեմ իրականացնելով անհարկի կոշտ ու խտրական քաղաքականություն: Բավական է հղել միայն վերջին շրջանի դեպքերը, որոնց մեջ առանձնահատուկ տեղ է զբաղեցնում շիա հոգևորական Նիմր Ալ-Նիմրիի մահապատիժը[14]: 2019 թ. ապրիլին Սաուդյան Արաբիայում գլխատվեց 37 մարդ, որոնց մեծ մասը շիաներ էին՝ Արևելյան նահանգից: Նրանց մի մասը մեղադրվում էր Իրանի և այլոց համար լրտեսություն անելու, ինչպես նաև ահաբեկչական խմբերին անդամակցելու մեջ՝ առանց հիմնարար փաստերի: Ըստ առկա տեղեկությունների՝ դատական ողջ գործընթացն ու մեղադրանքների ընդունումն ուղեկցվել է կտտանքների արդյունքում[15]: Գլխատված հանգուցյալների մարմինները նույնիսկ չեն հանձնվել հարազատներին, նրանց հնարավորություն չի տրվել հուղարկավորություններ կազմակերպել: Հանգուցյալների հարազատներին չի թույլատրվել նաև հրապարակային գրառումներ կատարել ողբերգության կապացությամբ:

Նշենք, որ շիաների նկատմամբ խտրություններն առարկայական են: Շիաները չեն կարող բարձր պաշտոններ զբաղեցնել օրինակ ուժային կառույցներում: Արևելյան նահանգի մայրաքաղաք համարվող

---

[13] 2018 Report on International Religious Freedom: Saudi Arabia, June 21, 2019, https://www.state.gov/reports/2018-report-on-international-religious-freedom/saudi-arabia/, հասանելի է 2019 թ. նոյեմբերին:

[14]Saudi Arabia: Upholding of Sheikh Nimr al-Nimr's death sentence signals ongoing assault on dissent, https://www.amnesty.org/download/Documents/MDE2327532015ENGLISH.pdf, հասանելի է 2019 թ. նոյեմբերին:

[15] The Saudi Shia: Between an Iranian rock and a Saudi hard place, ttps://www.aljazeera.com/indepth/opinion/saudi-shia-iranian-rock-saudi-hard-place-190507153257184.html, հասանելի է 2019 թ. նոյեմբերին:

Դամմամում հարյուր հազարավոր շիա բնակիչների համար կա միայն մեկ շիայական մզկիթ։ Շիաները նոր մկզիթներ կառուցելու փաստացի հնարավորություն չունեն։ Դպրոցների կրթական ծրագրերից հանված է շիաների կրոնական ավանդույթների և ծեսերի մասը։ Մինչև 2005 թ. շիաներին արգելվում էր Աշուրայի հրապարակային տոնակատարություններ կազմակերպել։ Սակայն ներկայումս էլ այս հարցում գոյություն ունեն որոշակի սահմանափակումներ։ Արևելյան շրջանները Սաուդյան Արաբիայում ամենահետամնացն են, դրանք դանդաղ են զարգանում՝ որոշակի վերապահումներով։ Առանձին հետազոտությունների տվյալներով՝ Սաուդյան Արաբիայում շիաները ստանում են ավելի քիչ աշխատավարձ, հաճախ գործազուրկ են դառնում, իսկ կարիերայի հնարավորությունները սահմանափակ են[16]։

2011 թ. Մերձավոր Արևելքում սկիզբ առած «արաբական գարնան» դեպքերն իրենց ազդեցությունն ունեցան Արևելյան նահանգներում շիայական հասարակական շարժումների ձևավորման հարցում։ Սաուդական իշխանություններն անմիջապես շտապեցին ճնշել դրանք։ Ակտիվիստները պահանջում էին վերջ դնել կրոնական խտրականությանը։ 2016 թ. շիա խարիզմատիկ հոգևորական Նիմր Ալ-Նիմրը, ով աջակցել էր հուզումներին, և քննադատական կեցվածք ուներ սաուդական քաղաքականության նկատմամբ, բանտարկվեց, իսկ հետագայում 2016 թ. ապրիլին, մահապատժի ենթարկվեց։ Ալ-Նիմրիի մահապատիժը, ով սերում էր Արևելյան նահանգի Ալ-Ավամի քաղաքից, հանգեցրեց բողոքի զանգվածային դրսևորումների[17]։

---

[16] Մանրամասն տե՛ս Saudi Arabia. Events of 2017, Human Rights Watch, www.hrw.org/world-report/2018/country-chapters/saudi-arabia; Saudi Arabia. Events of 2018, Human Rights Watch, https://www.hrw.org/world-report/2019/country-chapters/saudi-arabia հասանելի է 2019 թ. նոյեմբերին։

[17] Тарасов С., Провокация взрыва: зачем Эр-Рияд кознил шиитского проповедника ан-Нимра, 03.01.2016, https://regnum.ru/news/polit/2048272.html, հասանելի է 2019 թ. նոյեմբերին։

Իրանում կարելի է ասել բավական կոշտ արձագանքեցին Նիմր Ալ-Նիմրի մահապատժին։ Ապրիլին Թեհրանում տեղի ունեցան բողոքի մի շարք գործողություններ, հարձակում տեղի ունեցավ Սաուդյան Արաբիայի դեսպանատան վրա։ Միջազգային մամուլում այդ շրջանում եղան հրապարակումներ այն մասին, որ Իրանում նույնպես կան մարդու իրավունքների կոպիտ ոտնահարումներ հատկապես սուննիների և քրդերի նկատմամբ։

Իրականում, շիաները ցանկանում են, որպեսզի իրենք հավասար իրավունքներ և հնարավորություն ունենան՝ մասնակցելու Սաուդյան Արաբիայում համազգային խնդիրների լուծմանը։ Նրանք ցանկանում են օգտվել իրենց կրոնական ազատություններից, պաշտպանված լինել ատելության քարոզից և շիայական համայնքի դեմ ուղղված հարձակումներից։ Արդյո՞ք սաուդական իշխող ընտանիքն ի զորու է արմատապես փոխել իրավիճակը այն դեպքում, երբ պետությունն արդեն ձևակերպել է ներքին թշնամու առանցքներից մեկը՝ ի դեմս շիաների, դժվար է ասել։ Հատկանշական է, որ արտաքին թշնամին ամենևին Իսրայելը չէ, այլ իսլամական Իրանը, որը սնում ու սատարում է տեղի շիաներին։

Հետաքրքրություն է ներկայացնում այն հանգամանքը, որ շիաների նկատմամբ ատելության քարոզը գալիս է առաջին հերթին վահաբական աստվածաբաններից, և հստակ կերպով ձևակերպված է կրոնական և հասարակական խոսույթում[18]։ Սաուդական պետության ստեղծումից ի վեր իշխող սաուդ ընտանիքը արտոնել է վահաբական ուլամային շիաների մասին խոսել որոշակի նվաստացուցիչ տոնով։ Հետաքրքրական է, որ ներկա փուլում ևս շիաների նկատմամբ ատելության քարոզն ուղեկցվում է սոցիալական ցանցերում, ինչը նույնպես ուղղորդվում է «վերևներից» : Human Rights Watchi–ի

[18] They are not our brothers. Hate speech by Saudi officials, https://www.hrw.org/report/2017/09/26/they-are-not-our-brothers/hate-speech-saudi-officials հասանելի է 2019 թ. նոյեմբերին:

հերթական անդրադարձում նշվում է, որ շիաների, նաև՝ սուֆիների նկատմամբ պատմականորեն ձևավորված բացասական վերաբերմունքը կապ ունի պահպանողական ու ծայրահեղական գաղափարներ դավանող վահաբականության հետ[19]:

Եզրակացություն

Սաուդական իշխող ընտանիքի, ինչպես նաև վահաբական ուլամայի կողմից Սաուդյան Արաբիայում ապրող շիաների նկատմամբ իրականում իրականացվում է խտրություն: Կարելի է ասել, որ 1932 թ.-ից՝ սաուդական պետության հիմնումից հետո, շիաները հայտնվել են լուսանցքային վիճակում: Նման քաղաքականության նպատակն է՝ զսպել շիաների քաղաքական ակտիվության և կրոնական զարթոնքի հնարավոր դրսևորումները: Հարկ է նկատի ունենալ, որ սաուդական նավթային պաշարների մի զգալի մասը գտնվում է հենց Արևելյան նահանգում, և իշխող ընտանիքը միշտ զգուշանում է այս շրջանում հնարավոր անջատողական շարժումներից և ապակայունացման վտանգից:

Մյուս կողմից, սաուդական թագավորական ընտանիքը ձգտում է ամեն կերպ նվազեցնել Իրանի կրոնական և քաղաքական ազդեցությունը երկրի արևելյան նահանգներում: Մյուս կողմից, շիաներն ուղղակի դարձել են սաուդաիրանական առճակատման զոհը՝ ժամանակ առ ժամանակ ենթարկվելով սահմանափակումների ու հալածանքների:

Հարկ է նշել, որ 2011 թ. սկսված «արաբական գարնան» դեպքերից հետո արաբական առանձին երկրներում սկիզբ առան քաղաքացիական պատերազմներ ու միջազգային հակամարտություններ, որոնցում մրցակցում են Իրանն ու Սաուդյան Արաբիան: Ասվածի

[19] Фроловский Д., Испытание переменами. Сможет ли Саудовская Аравия выдержать реформы, 06.08.2018, Московский центр Карнегии, https://carnegie.ru/commentary/76982, հասանելի է 2019 թ. նոյեմբերին:

ապացույցն են սիրիական և եմենական դեպքերը։ Սիրիայում Իրանը պաշտպանում է գործող իշխանությանը՝ ի դեմս Բաշար Ալ-Ասադի, իսկ Եմենում՝ հուսիներին։ Արաբական մի շարք երկրներում, այդ թվում՝ Իրաքում, Լիբանանում, Բահրեյնում, և այլն, սաուդիրանական մրցակցությունը զգացվում է ոչ պակաս շոշափելի կերպով։

Շիաների դեմ ուղղված խտրականությունն ու սահմանափակումները, հաշվի առնելով շիաների պատմական փորձը, կրոնական արժեքային համակարգը, հավաքական ինքնության առանձնահատկությունները, չեն կարող թուլացնել շիաների ազգային և կրոնական զգացմունքներն ու ձգտումները։ Ամեն դեպքում, Սաուդյան Արաբիայում շիաները դեռ երկար ժամանակ կբախվեն ազգային և կրոնական խտրականության, իսկ սաուդիրանական մրցակցությունն առաջիկայում նույնպես կշարունակի խորացնել այն անջրպետը, անվստահության այն մթնոլորտը, որ գոյություն ունի շիաների նկատմամբ։ Չնայած Սաուդյան Արաբիայում ապրող շիաները իրենց համարում են տվյալ հասարակության անքակտելի մասը և ինքնության առումով արաբներ են, սակայն այդ հանգամանքը ևս չի փոխում պետական այն օրակարգը, որ գոյություն ունի շիաների հետ կապված։ Պարզ է նաև, որ չնայած առկա դժվարություններին ու անհաղթահարելի թվացող խնդիրներին, շիաները շարունակելու են պայքարել իրենց իրավունքները սաուդական պետության մեջ վերականգնելու համար։

ARAKS PASHAYAN
(IOS)

THE PROBLEMS OF SHIA MINORITIES IN SAUDI ARABIA: THE IMPACT OF EXTERNAL AND INTERNAL FACTORS

The paper deals with the problems of Shia minorities in Saudi Arabia and the impact of external and internal factors in shaping of this kind of issues. The Saudi ruling family's, as well as the Wahhabi ulama's attitude towards the Shia population is discriminating. Since 1932 establishment of the Saudi state, the Shiites were marginalized. The purpose of such a policy was to deter possible manifestations of Shia political activity and religious revival. It should be noted that a significant portion of Saudi oil reserves are located in the Shia populated eastern provinces, and the ruling family was always alert to possible separatist movements and the danger of destabilization in this region. On the other hand, the Saudi royal family seeks to minimize Iran's religious and political influence in the country's eastern provinces, among Shia communities. The Shiites have simply become victims of Saudi-Iranian confrontation. Although the Shiites in Saudi Arabia consider themselves to be the integral part of Saudi society and are Arabs in identity, this fact does not change the state agenda that exists regarding Shiites. It is also clear that despite the challenges and seemingly insurmountable problems, the Shiites will continue to fight for their rights in the Saudi state.